Հաստատում եմ

«Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և
դեռահասների առողջության ինստիտուտի
Տնօրեն Բաբլոյան Արման Արայի

24.02.2026թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եկատերինա Միքայելի Հովհաննիսյանի՝ ԺԴ.00.07 «Նյարդաբանություն, հոգեբուժություն և թմրաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման **«ԿՈԳՆԻՏԻՎ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ SARS-CoV-2 ՎԱՐԱԿԻՑ ՀԵՏՈ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ»** թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Ատենախոսության արդիականությունը

Երկրագնդի բնակչության թվաքանակի ավելացմանը զուգընթաց աճում է նաև կոգնիտիվ խանգարումների տարածվածությունը և դրանց հետևանքների կառավարումը մեծ բեռ են ցանկացած առողջապահական համակարգի համար: Հետքովիդային շրջանում երիտասարդների շրջանում հաճախադեպ դարձած գանգատները («ուղեղի մշուշ», հիշողության և ուշադրության խանգարումները, դեպրեսիվ տրամադրություն) խթան հանդիսացան հետազոտելու կոգնիտիվ խանգարման բերող որոշ ռիսկի գործոններ երիտասարդ և միջին տարիքի անձանց շրջանում:

Ատենախոսության թեման ուղղված է COVID-19-ով վարակված հայազգի երիտասարդ և միջին տարիքի անձանց շրջանում ի դերև հանել երիտասարդ տարիքում դեմենցիայի բերող որոշ գեների և միջավայրային ռիսկի գործոնների ուսումնասիրությունը և առընչությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ կոգնիտիվ խանգարումների հետ: Հետազոտությունը իրականացվել է հետքովիդային շրջանում, սակայն այն չի թիրախավորել COVID-19-ի կապը կոգնիտիվ խանգարումների հետ՝ առողջ հսկիչ խմբի բացակայության պատճառով:

Թեման արդիական է հայազգի պացիենտների շրջանում կոգնիտիվ խանգարման բերող գենետիկ և կառավարելի ռիսկի գործոնների հայտնաբերման, դրանց հետագա մանրամասն ուսումնասիրությունների և հնարավոր բուժական տակտիկաներ մշակելու տեսանկյունից:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունն ունի դասական կառուցվածք՝ ներածություն, գրականության համակողմանի վերլուծություն, թիրախ խմբի, նյութերի և մեթոդների նկարագրություն, արդյունքներ, քննարկում, ամփոփում, եզրակացություններ, գործնական առաջարկություններ և գրականության ցանկ: Ի հավելումն վերոնշյալի, հեղինակը նաև մանրամասն անդրադարձել է աշխատանքի սահմանափակումներին և հետագա հեռանկարներին:

Որպես ատենախոսական աշխատանքի կառուցվածքային ուժեղ կողմեր կարելի առանձնացնել հետևյալները՝

- Առաջին անգամ հայկական պոպուլացիայում հետազոտվել են երիտասարդ տարիքում դեմենցիայի բերող որոշ գեների պատճենների թվի տատանումները և մի շարք միջավայրային ռիսկի գործոնների (հիպովիտամինոզ Բ12, Բ9, Դ-ի, կրած նեյրոտրոպ վիրուսների) ազդեցությունը բարձրագույն ճանաչողական ֆունկցիայի վրա:
- հստակ ձևակերպված նպատակ և հետազոտական խնդիրներ
- վիճակագրական հավաստի մեթոդաբանություն, R-4.3.2 ծրագրային փաթեթների կիրառմամբ նկարագրական, համեմատական և մոդելային վերլուծություններ
- տարիքային, սեռային, կլինիկական և այլ ցուցանիշների համակցված ուսումնասիրություն:

Գրականության աղբյուրները ներառում են վերջին 4–5 տարվա միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերի ≈200 հրապարակումներ:

Գիտական նորույթ

Ստացած արդյունքները արժեքավոր նախապայման են ստեղծում հետագա ավելի խորը տրանսլյացիոն հետազոտությունների համար՝

- Հետազոտված յուրաքանչյուր ռիսկի գործոն, որը դրսևորել է ասոցիացիա կոգնիտիվ խանգարման հետ, ենթակա է պոտենցիալ թիրախավորման:

- Գենետիկ նախատրամադրվածության հիմնավորումը, հատկապես սթրես-միջնորդված կոգնիտիվ խանգարումների հարցում, կարող է հիմք հանդիսանալ ոչ միայն դեղորայքային բուժման, այլև CRHR1 գենի պատճենների թվի տատանումները կրող էքզոնների մոդիֆիկացիայի վրա հիմնված կանխարգելիչ գենոթերապևտիկ մեթոդ մշակելու ուղղությամբ:

- Հաշվի առնելով, որ հետքովիդային կոգնիտիվ խանգարման սուբյեկտիվ գանգատը ասոցացվում է միայն դեպրեսիվ տրամադրության հետ՝ ադեկվատ բուժման պարագայում այն կարող է լինել դարձելի, հատկապես որոշ գենետիկ պոլիմորֆիզմների պարագայում:

- Հետազոտության արդյունքում ստացված գիտելիքները կարող են կիրառվել նյարդաբանության, հոգեբուժության, ախտաբանական ֆիզիոլոգիայի, գենետիկայի, ինֆեկցիոն հիվանդությունների դասընթացներում:

Մեթոդաբանական համապատասխանությունը

Ատենախոսության ընթացքում կիրառված հետազոտության դիզայնը ամբողջությամբ համահունչ է աշխատանքի առջև դրված նպատակին և սահմանված գիտական խնդիրներին: Ուսումնասիրությունն իրականացվել է դեպք ստուգիչ դիզայնով, որը համապատասխանում է գնահատման միջազգային մոտեցումներին (STROBE սկզբունքներին) և վերլուծվել է 2 մոդելներում:

Աշխատանքի շրջանակում կիրառվել են **միջազգային չափանիշներին համապատասխան լաբորատոր մեթոդներ**, նեյրոկոգնիտիվ գնահատման թեստեր: Նմուշառման և նմուշների պահման փուլերում պահպանվել են պրե-անալիտիկական որակի վերահսկման պահանջները՝ ապահովելով կենսանմուշների պահպանման ամբողջականությունը և արդյունքների վավերականությունը:

Հետազոտության մեջ ընդգրկված մասնակիցների ընտրանքային ծավալը բավարարում է վիճակագրական հզորության չափանիշներին և ապահովում է ստացված արդյունքների վստահելիությունը: Ատենախոսությունում հստակ և լիարժեք նկարագրված են **ներառման և բացառման չափանիշները**, ինչը երաշխավորում է թիրախ պոպուլյացիայի հստակ սահմանումը և նվազեցնում կողմնակալության հավանականությունը:

Վիճակագրական վերլուծության համար կիրառվել են արդի և միջազգային կլինիկամեթոդաբանական պահանջներին համապատասխան գործիքներ՝ ներառյալ համեմատական վերլուծություններ, կորելյացիոն գնահատումներ, ինչպես նաև

լոգիստիկ ռեգրեսիայի մոդելներ՝ բազմագործոնային շտկումներով: Ընտրված մեթոդները լիովին բավարարում են հետազոտական հարցերի լուծման պահանջներին և ապահովում են տվյալների բազմակողմանի, գիտականորեն հիմնավորված մեկնաբանություն:

Ընդհանուր առմամբ, ատենախոսության մեթոդաբանական մոտեցումները լիովին համապատասխան են միջազգային գիտական չափանիշներին և ապահովում են աշխատանքի գիտական արդյունքների բարձր վավերականություն և վստահելիություն:

Գիտական և գործնական նշանակություն

Աշխատանքի արդյունքները արժեքավոր են ինչպես գիտության, այնպես էլ առողջապահական քաղաքականության համար:

Ստացված արդյունքները ոչ միայն հիմք են հանդիսանում հետագա խորը տրանսլյացիոն հետազոտությունների համար, այլև գենետիկական նախատրամադրվածության հիմնավորումը կոգնիտիվ խանգարումների դեպքում, կարող է ծառայել որպես հիմք կանխարգելիչ գենոթերապևտիկ մոտեցումների մշակման համար:

Գործնական տեսանկյունից, հետքովիդային կոգնիտիվ խանգարման սուբյեկտիվ գանգատների պարագայում, հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել բուժող բժիշկին՝ խորհուրդ տալով դեպրեսիայի գնահատում և անհրաժեշտության դեպքում ադեկվատ բուժում, քանի որ այն կարող է լինել դարձելի, մասնավորապես՝ որոշ գենետիկական պոլիմորֆիզմների առկայության պայմաններում:

Հետազոտությունը կարող է հիմք հանդիսանալ ազգային գենետիկական ռեգիստրի ձևավորման համար՝ ներառելով հետազոտված 162 պացիենտների CNV-ների տվյալները և ապահովելով նրանց շարունակական կլինիկական հսկողությունը:

Ատենախոսության սահմանափակումները

Կատարված մեծածավալ աշխատանքի և ստացված կարևոր արդյունքների հետ մեկտեղ, հարկ է նշել, որ աշխատանքում առկա են որոշ օբյեկտիվ սահմանափակումներ, որոնք թեև էական չեն և չեն թերագնահատում արդյունքների վստահելիությունը, այնուամենայնիվ պետք է նշել, որ՝

- ✓ Որոշ ենթախմբերում նմուշի փոքր ծավալը սահմանափակում է վերլուծությունների հզորությունը:

- ✓ Բացակայում են կոգնիտիվ ֆունկցիայի գնահատման բազիսային նախորդող ցուցանիշներ՝ կոգնիտիվ դիսֆունկցիայի դինամիկան գնահատելու համար:
- ✓ Աշխատանքի ընթացքում որոշվել են մեծաթիվ ռիսկի գործոններ, սակայն առկա են ապացուցողականություն ունեցող այլ ռիսկի գործոններ, որոնք չեն ներառվել:

Եզրակացություն

Առաջատար կազմակերպությունը, ուսումնասիրելով Ե.Մ.Հովհաննիսյանի «Կոգնիտիվ խանգարումների որոշ առանձնահատկություններ SARS-CoV-2 վարակից հետո երիտասարդ և միջին տարիքի անձանց շրջանում» ատենախոսական աշխատանքը, եկել է եզրակացության, որ ատենախոսությունը գիտականորեն հիմնավորված, ինքնուրույն և հեղինակային զգալի ներդրում է ոլորտում, իսկ աշխատանքի արդյունքները կարևոր նշանակություն ունեն ինչպես կլինիկական, այնպես էլ գիտահետազոտական կիրառությունների համար:

Եկատերինա Միքայելի Հովհաննիսյանի «Կոգնիտիվ խանգարումների որոշ առանձնահատկություններ SARS-CoV-2 վարակից հետո երիտասարդ և միջին տարիքի անձանց շրջանում» թեմայով, ԺԴ.00.07 «Նյարդաբանություն, հոգեբուժություն և թմրաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսական աշխատանքը իր արդիականությամբ, կիրառված հետազոտական դիզայնի և մեթոդների հիմնավորվածությամբ, ստացված տվյալների ծավալով, արդյունքների գիտական ու գործնական արժեքով լիովին համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսությունների համար սահմանված պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԺԴ.00.07 «Նյարդաբանություն, հոգեբուժություն և թմրաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Կարծիքը ներկայացվել է բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա.Սարգսյանը, քննարկվել և հավանության է արժանացել «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:

Նիստի մասնակիցներ՝ բ.գ.դ.,պրոֆ. Ա.Ս. Բաբլոյան, բ.գ.դ.պրոֆ., Ա.Ա Սարգսյան, բ.գ.դ.,պրոֆ. Գ.Գ. Ամարյան, բ.գ.թ.Ս.Գ. Սարգսյան, բ.գ.թ.Ն.Գ. Մկրտչյան, բ.գ.թ. Հ.Գ. Սարգսյան, բ.գ.թ.Ա.Վ. Գյուլբուդաղյան, բ.գ.թ.Ս.Ա. Բաբլոյան, բ.գ.թ. Ս. Հ.

Առաքելյան, բ.գ.թ. Ա.Ա. Բաղդասարյան, բ.գ.թ. Հ.Վ. Նազարյան, բ.գ.թ. Մ.Մ.Վոսկանյան, բ.գ.թ. Ն.Ա. Արիկյանց.

Գիտական խորհրդի նախագահ, բ.գ.դ. պրոֆ. Ա.Ս. Բաբլոյան

Գիտական խորհրդի քարտուղար, բ.գ.թ. Ն.Ա. Արիկյանց